ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«30» «Մայիս» 2024 թ. № 184-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մայիսի 14-ի «Շրջակա միջավայրի նախարարության «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 140-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 8-րդ կետից հանել «պահպանության,» բառը և կետադրական նշանը.

2) 9-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) կազմակերպում, իրականացնում կամ աջակցում է ազգային պարկի ջրային ու ցամաքային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ու մշակութային ժառանգության գիտական ուսումնասիրությանը».

3) 9-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրականացնում է խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ.».

4) ուժը կորցրած ճանաչել 9-րդ կետի 6-րդ ենթակետը.

5) ուժը կորցրած ճանաչել 5-րդ բաժինը:

2. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի նոյեմբերի 18-ի «Շրջակա միջավայրի նախարարության «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 443-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 8-րդ կետից հանել «պահպանության,» բառը և կետադրական նշանը.

2) 9-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) կազմակերպում, իրականացնում կամ աջակցում է Արփի, Արդենիս լճերի և Ախուրյան գետի վերին հոսանքի ձախակողմյան վտակների ավազանների, ինչպես նաև Ջավախքի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լեռնալանջերի ջրային ու ցամաքային էկոհամակարգերի տարածքներում լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ու մշակութային ժառանգության գիտական ուսումնասիրությանը.».

3) 9-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրականացնում է խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ .».

4) ուժը կորցրած ճանաչել 9-րդ կետի 6-րդ ենթակետը.

5) ուժը կորցրած ճանաչել 4-րդ բաժինը:

3. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 2-ի «Շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հուլիսի 29-ի N 249-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 378-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 9-րդ կետից հանել «պահպանության,» բառը և կետադրական նշանը.

2) 9-րդ կետի ա) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) կազմակերպում, իրականացնում կամ աջակցում է պահպանվող տարածքների բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ու մշակութային ժառանգության գիտական ուսումնասիրությանը.».

3) 9-րդ կետի դ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրականացնում է խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ.».

4) ուժը կորցրած ճանաչել 9-րդ կետի զ) ենթակետը.

5) ուժը կորցրած ճանաչել 4-րդ բաժինը:

4. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի նոյեմբերի 18-ի «Շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մայիսի 14-ի N 141-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 440-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 8-րդ կետից հանել «պահպանության,» բառը և կետադրական նշանը.

2) 9-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) կազմակերպում, իրականացնում կամ աջակցում է ազգային պարկի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ու մշակութային ժառանգության գիտական ուսումնասիրությանը.».

3) 9-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրականացնում է խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ.».

4) ուժը կորցրած ճանաչել 9-րդ կետի 6-րդ ենթակետը.

5) ուժը կորցրած ճանաչել 4-րդ բաժինը:

5. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի նոյեմբերի 18-ի «Շրջակա միջավայրի նախարարության «Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և շրջակա միջավայրի նախարարի 2020

թվականի մայիսի 14-ի N 139-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 441-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 8-րդ կետից հանել «պահպանության,» բառը և կետադրական նշանը.

2) 9-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) կազմակերպում, իրականացնում կամ աջակցում է Ազատ և Վեդի գետերի ավազաններում բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ու մշակութային ժառանգության գիտական ուսումնասիրությանը.».

3) 9-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրականացնում է խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ.».

4) ուժը կորցրած ճանաչել 9-րդ կետի 6-րդ ենթակետը.

5) ուժը կորցրած ճանաչել 4-րդ բաժինը:

6. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի նոյեմբերի 18-ի «Շրջակա միջավայրի նախարարության «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մայիսի 14-ի N 138-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 442-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 8-րդ կետից հանել «պահպանության,» բառը և կետադրական նշանը.

2) 9-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) կազմակերպում, իրականացնում կամ աջակցում է ազգային պարկի, արգելոցի և արգելավայրերի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ու մշակութային ժառանգության գիտական ուսումնասիրությանը.».

3) 9-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրականացնում է խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ.».

4) ուժը կորցրած ճանաչել 9-րդ կետի 6-րդ ենթակետը.

5) ուժը կորցրած ճանաչել 5-րդ բաժինը:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

5/30/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«30» մայիս 2024թ.

ք. Երևան